

Լինչ եւ նրա «Արմենիան»

Լինչը ծնուել է Լոնդոնում 1862 թուին¹⁾։ Նրա ծնողներն են եղել մի Իրլանդական գերդաստանի ուսար և Սկոտական շառաւիղի մի նշանաւոր գինւորականի դուստր։ Իրլանդիայի Մէյօ նահանգի Լինչերն ապրել են այդ վայրում սերունդից սերունդ։ Նրա հայրը ընտանիքի տասն և մէկ որդիներից մէկն էր։ Լինչի պապն եղել է շատ նշանաւոր զօրավար. նա մասնակցել է Սպանիական պատերազմին և «նախայարձակ գունդը» առաջնորդել է և գրաւել ամուր բերդերից մէկը։ Սակայն վերջինս, երբ վերադառնում է հայրենիք, տեսնում է, որ իր հայրենական տանը, որ իր ժառանգութիւնն էր, մի օտարական էր տիրացել։ Այդ բանի վրայ գայրանալով նա մենամարտի է հրաւիրում «անիրաւ տիրացողին» և մահացու հարուած է հասցնում վերջինս։ Իր կալուածքների տէր դառնալուց յետոյ, նա ամուսնանում է մի կենտացի աղջկայ հետ և հայր է լինում տասն և մէկ զաւակների, որոնցից մէկն էր «Արմենիա» գրքի հեղինակի հայրը։ Ինչպէս երևում է Լինչ ճանապարհորդութիւններ անելու դիժը ժառանգաբար է ստացել, օրինակ իր հօրեղբայրներից մէկն էլ, բացի իր պապից, եղել է զօրավար և ճանապարհորդ. նա Անգլիոյ թագաւորի կողմից հրաման է ստանում գէպի Եփրատ ձեռնարկուող արշաւանքի հրամանատարի կոչումն իր վրայ վերցնել. 1837 թ. յետոյ լինում է ծովակալ։ Երկար տարիներ լինելով Ասիայում, յատկապէս Միջագետքում, նա քննել ու չափել է «Եփրատն ու Տիգրիսն ու այն երկիրը, որ գտնուում է այդ պատմական գետերի շրջակայքում»։ Լինչի հայրն էլ թոմաս Կերը Լինչ, որ ղեկ երիտասարդ էր և սովորում Իուրլէնի Կոլէջում, հետեւելով իր մեծ եղբօրը դառնում է ճանապարհորդ։ Լինչի մայրական պապը շատ նշանաւոր անձնաւորութիւն է եղել, ինչպէս ինքն է ասում. «Իբր ուսումնական և աւելի շատ արեւելեան ուսումնական հաճելի էր Եւրոպացի ուղևորներից շատերի համար։ Տիգրիսի լայնարձակ հոսանքի վրայ նայող նրա զրազարանը հռչակաւոր էր և այդտեղ էր, որ Ռոլինսօն հաւաքեց աշխարհին նուիրուած աշխատութիւններից շատերը»։ Սակայն վերջինս գրելու ձիրք կամ ցանկութիւն չի ունեցել և մեռել է սոսնց հրատարակելու գոնէ մի գործ։ Լինչի ասելով ինքը շատ նման է եղել պապին. «Նորա և իմ գիմագծերի միջև եղած նմանութիւնը սաստիկ ուշագրաւ է, և «Արմենիա» հրատարակելուս պատճառնե-

1) Կենսագրութիւնը բաղում ենք Լինչի ինքնակենսագրութիւնից, որ տպուած է Տօնագետեանի հրատարակած «Արմենիա» դրքում։

րից մէկն այն էր, որ ես ցանկանում էի դարմանել նրա զրական ամուլութիւնը՝ ինչ որ զգում էի միշտ իրր յանդիմանութիւն նորա յիշատակին»:

Լինչը հայ ծագում է ունեցել մօր կողմից: Նրա մօրական պապը մի անգլիացիու հետ բարեկամանում է. երկուսով մի առաքելական գործով գնում են արևելք. «Առաքելական ջանքերը յարարելութեան մէջ են գնում նրանց մի հայ քննախնամի հետ, կարծես Շիրազից—որովհետև հայերը ամեն ժամանակներում եւ արգիւնաւեհ միջնորդներ են եղել արեւելի եւ արեւմուտի միջեւ»: Երկու անգլիացիները ծանօթանում են հայ ընտանիքի երկու օրիորդների հետ և վերջիններս «հարսնութեան են խնդրում» անգլիացիներին կողմից, որը և իրականանում է: Այսպէս ուրեմն Լինչի տատը եղել է իսկական հայ: Նրա ծնողներն եղել են վերին աստիճանի լաւ մարդիկ, և նա շատ գովեստով է խօսում իր ծնողների մասին. Լինչը և իր միակ քոյրը մնացել են ընտանեկան սիրելի պայմաններում. «Աւելի մեղմանոյց և խանդակաթ ծնողներ չգիտեմ ուրիշ երկխաներ արգեօք ունեցել են երբէք»:

Նա մեծանում է նման ուրիշ երեխաների. անտառներին, պարտէզներին, ծովերի շրջանում, մի խօսքով ազատ բնութեան մէջ: Հենց այստեղից արդէն պարզւում է, թէ Լինչ հենց փոքր հասակից դէպի բնութեան գեղեցկութիւնները սէր է ունեցել, որն իր ապագայ գործունէութեան վրայ կնիք է թողել: Նրա ծնողները ամեն ինամբ տանում են Լինչի կրթութեան ու դաստիարակութեան վրայ, թէ մտաւորական և թէ ֆիզիքական: Նոր լեզուներին նա ծանօթանում է ղեռ մանուկ հասակում «օտարազգի դայեակներից և դաստիարակչուհիներից»: Տասը տարեկան հասակում ուղարկւում է Ուիլնիսթրի մօտակայքում եղած մի ընդարձակ գիշերօթիկ դպրոց, որտեղ վերջացնելով մտնում է Քէմբրիջի համալսարանը: Նա այդտեղ ծանօթանում է Պլատոնի և Սոկրատի գրքերի հետ, որոնք նրա մտաւոր կրթութեան վրայ շատ խոր ազդեցութիւն են թողնում: Նա յաջող աւարտելով Քէմբրիջի համալսարանը, այդտեղ ուսանողական զանազան պաշտօններ է վարում: Սակայն նա կեանք չի մտնում գործելու ղեռ, այլ գնում է Հայդէլբերգի համալսարանը լսելու մեծանուն փիլիսոփայութեան պատմութեան պրօֆէսօր Կուսօ Ֆիշերին: Ապա սովորում է իրաւագիտութիւն, և մտնում է հօր պաշտօնատեղին, որտեղ առևտրական վարժութիւնն ու ունակութիւնը բոլորովին արմատանում են Լինչի մէջ: Նա սովորում է և սկսում է ինքը կառավարել իրանց գործերը արևելքի հետ, ուստի և ճանապարհորդութիւններ է աւում գէպի այդ երկիրները. հրկար տարիներ, ինչպէս ինքն է ասում. «Գրեթէ բացառապէս այս հետամտութեան և արևելեան

ճանապարհորդութեան նուիրուեցան կեանքիս տարիները»:

Լինչը բաւական երկար ժամանակ մնում է արևելքում, իր հայրական գործերի վրայ է հսկում, բնական է, որ Լինչի նման մի բարձր ինտելլիգենտ անհատ չէր կարող անտարբեր վերաբերուել դէպի այն երկիրը և ժողովուրդները—արևելքը, որտեղ ինքն էր ապրում: Նա իր գործերի վրայ մեծապէս հող տանելով միաժամանակ սկսում է հետաքրքրուել արևելքով, Հնդկաստանով և այդ երկրներում ապրող ժողովուրդներով: Կամաց-կամաց նրա մէջ այն համոզումն է առաջ դալիս, ինչպէս ինքն է ասում իր գրքի յառաջաբանի մէջ, որ Հնդկաստանի և արևելեան երկրների բոլոր առեղծուածի լուծումը պիտի Հայաստանի միջոցով լինի, Հայաստանն և հայ ազգն է միակ երկիրը, որ արևելեան խնդրի լուծումը կարող է տալ: «Որպէսզի կարողանանք հասկանալ Ասիան, հարկաւոր է մօտիկից ծանօթանալ Հայաստանին¹⁾» էջ VII:

Աւելացնենք նաև այդ ժամանակներում Հայկական հարցի առաջ բերած մեծ իրարանցումը Եւրոպական դիպլոմատների մօտ, Հայկական հարցը օրուայ խնդիր էր այդ ժամանակներում, որով հետաքրքրուում էր համարեա ամբողջ Եւրոպան, մանաւանդ Գլադստօնի ազդեցութեան ներքոյ Անգլիան և նրա մամուլը, որն ունէր Հայաստան ուղարկուած յատուկ թղթակիցներ, ինչպէս է. Դիլլօն և ուրիշներ. նոյնպէս նաև Լինչի զուտ գիտական հետաքրքրութիւնը դէպի Հայաստանը թէ ազգագրական և թէ տշխարհագրական տեսակէտներից: Ահա այս պատճառները խթան եղան Լինչին ճանապարհորդական ցուպ վերցնել և գնալ Հայաստանի բարձրագագաթ լեռները բարձրանալ, շրջել հովիտները՝ կարճ՝ ամեն մի անկիւն, և իր հոյսկապ աւխտաւորիւնը պատրաստել: Նա Հայաստանում չի ունեցիլ ոչ անձնական շահեր և ոչ էլ որևէ պետական շահ (էջ XI) այլ առաջնորդուել է լոկ գիտական տեսակէտից: 1893 թ. օգոստոս ամսին Լինչը ոտք է կոխում Հայաստանի հողի վրայ մինչ 1894 թուի մարտ ամիսը, շրջում է ամբողջ ուստական Հայաստանը և ձմեռը մնում է Տաճկաստանի Էրզրում քաղաքում: Այդտեղ հանգստութիւն գտնելով մի առժամանակ նա ցանկանում է կազմել Հայաստանի քարտէզը, սակայն տեսնում է, որ չի յաջողում. հարկաւոր էր մի երկրորդ ճանապարհորդութեան ձեռնարկել. և ահա 1898-ին մայիս ամսից սկսում է իր երկրորդ ճանապարհորդութիւնը, որ տևում է նոյն թուի սեպտեմբեր ամիսը: Այս երկրորդ ճանապարհորդութեան ժամանակ Լինչն առանձնապէս երկրի աշխարհագրութեան է նուիրում և կազմում

1) Քաղուածքները բոլորը վերցրած են Լինչի Հայաստան գրքի սուսական նրատարակութիւնից:

իր այնքան հետաքրքիր և արժէքաւոր Հայաստանի քարտէզը. «Մենք մեր վրանները խփում էինք, ասում է Լինչ, բարձր լեռնաշղթաների վրայ, որտեղից հարթութիւնները, լճեր և աղմկաբար գետեր էին բացւում մեր առաջ, որպէս աշխարհագրական քարտէզ»։ Լինչը վերջացնելով իր ճանապարհորդութիւնները Հայաստանում, հաւաքում է մեծ քանակութեամբ նիւթեր, պատմական յիշատակարաններ, գրուածքներ Հայաստանի մասին, որոնք ինքը չէր կարող Անգլիայում նստած ձեռք բերել, զանազան նկարներ իր նկարած և գնում է հայրենիք, տանելով իր հետ Հայաստանից ստացած տպաւորութիւնները, փիճակագրական և պատմական տեսութիւններ կազմելու իր հաւաքած բոլոր փաստերը։ Անգլիայում հանգիստ և յարմար պայմանների մէջ նա աշխատում է իր գրքի համար մի քանի տարի. թէ նա ինչպիսի սոսկալի աշխատանք էր կատարում իր գրասենեակում նստած, այդ մասին պ. Տօնապետեան մի յօդուած է գետեղել «Հորիզոն» թերթի մէջ։ Նա հաւաքում է զանազան գրքեր Հայաստանի, Հայոց պատմութեան մասին գրուած և սկսում է կարդալ և ուսումնասիրել. նա ասում է. «Միթէ տարօրինակ չէ, որ մի այդպիսի շքնաղ երկիր այդչափ դարեր շարունակ մնացել է ստուերի մէջ, որ մինչև իսկ յոյն և հռոմայեցի հեղինակների լաւագոյն գրուածքներն անգամ ցոյց են տալիս քիչ ծանօթութիւն նրա ընդթիւ Անցեալ դարի ընթացքում արդէն շատ բան է արուած՝ ցրելու համար այն խաւարը, և ինձնից քիչ ջանք չի պահանջել այն, որ ես հաւաքեմ եւ սխսեմի քակ դեմ իմ նախորդների աօխատութիւնները»։ Այս վերջին բառերն են ամենակարեւորը։ Երկար աշխատանքներից յետոյ նա յանձնում է տպագրութեան իր աշխատութիւնը։ Անգլիկերէնի հրատարակութիւնից յետոյ հայ գրամատէրների ծախքով ռուսերէն էլ է հրատարակուում նոյնութեամբ 1910 թ. Բայց զժրախտաբար այդ շատ կարեւոր գրքի թարգմանութիւնը մինչև այժմ չէ հրատարակուած հայերէն, միայն պ. Տօնապետեանը Լօնդոնում հրատարակել է հանգուցեալ Լինչի աշխատութեան համառօտ բովանդակութիւնը։ Իր աշխատութիւնը վերջացնելուց յետոյ՝ Լինչը երկար ժամանակ հղել է պարլամենտի ազատական խմբի շէֆը։ Վերջին ժամանակներումս Լինչը զբաղուած էր Անգլիական հասարակական գործերով։ Նա մեռաւ անցեալ տարուայ նոյնիւրեր ամսին, 51 տարեկան հասակում։ Նա ամուրի էր մնացել։ Նրա մահը շատ խոր վիշտ պատճառեց հայ հասարակութեան գիտակից անհատներին. հայ մամուլը շատ քիչ բան գրեց Լինչի մասին, բացառութեամբ «Հորիզոն» թերթի, որ մի քանի յօդուած նուիրեց։